

Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑՈՒ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ «ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅԱՆ» ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԺԱ դարի հայ մատենագրության բազմերախտ մշակներից է Սանահին վանքի նշանավոր միաբան Անանիա վարդապետ Սանահնեցին: Ի շարս մատենագրի հեղինակած մի շարք երկերի («Մեկնութիւն Մատթէի», «Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պաւղոսի», «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի» «Ներբողեան ի վերայ սրբոյ Էջմիածնայ» և այլ) գնահատելի և ուշարժան է նրա «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» կամ «Լուծումն մաքառման երկաբնակացն, որք ի կարծիս ճշմարտութեան անյարմար դաւանեն երկակս ի միանն մուծանել բնութիւն, որ է Աստուած Բանն, Աստուած մարդն Յիսուս Քրիստոս» ընդարձակ խորագիրը կրող աշխատությունը, որ գրվել է 1057—59 թթ. «հրամանաւ» և հորդորով Պետրոս Գետադարձ կաթողիկոսի: Լինելով իր շրջանի դավանաբանական պայքարի կարևորագույն ստեղծագործություններից մեկը՝ Անանիա Սանահնեցու այս երկի դավանաբանական աղբյուրների քննությունը հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմելու գաղափարաբանական այն զինանոցի մասին, որից օգտվում էին ժամանակի հայ դավանաբաններն ու Հայ Եկեղեցու անկախությանը նախանձախնդիր գործիչներն՝ ընդդեմ քաղկեդոնականների գաղափարա-քաղաքական նկրտումների:

Արդեն Հ. Յորդանը իրավացիորեն նկատել է, որ «Հակաճառության» հեղինակը զգալիորեն օգտվել է «Կնիք հաւատոյ»-ից[1]: Եվ իսկապես, դավանաբանական այս երկու աշխատությունների բնագրային քաղվածք-միավորների բաղդատումը այդ է հաստատում: Սակայն «Կնիք հաւատոյ»-ն իր տեսակի մեջ Անանիա Սանահնեցու միակ աղբյուրը չէ: Դավանաբան հեղինակն իր ձեռքի տակ է միաժամանակ ունեցել նաև Ստեփանոս Սյունեցու (Դվնեցու՝ Ը դ.) «Վասն անապականութեան մարմնոյն» խորագրով երկը: Քաղվածք-վկայաբերումների մի զգալի մասը ուղղակի առնված է Ստ. Սյունեցու այս գրությունից: Սակայն հեղինակը մեխանիկորեն չի շարահարում վկայաբերվող հատվածները: Ծագելով «Կնիք հաւատոյ»-ից և Ստ. Սյունեցու հիշյալ գործից՝ երբեմն դրանք ներկայացվում են փոխագուցված ձևով: Ոչ հազվադեպ այդ վկայաբերումներն առավել նախընտրելի ու շահեկան ընթերցումներ են պարունակում:

Ստորև բերում ենք դավանաբանական այդ երկու գործերից, ինչպես նաև՝ մասամբ Սահակ կաթողիկոս Զորափորեցու (Է դար) անվամբ հայտնի «Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն» վերտառությամբ գրվածքից, ծագող «Հակաճառության» համապատասխան քաղվածքների

---

[1] Տե՛ս H. Jordan, Armenische Irenäus fragmente mit deutscher Übersetzung nach W. Lüdke zum teil ersfmalig herasgegeben und untersucht, Leipzig, 1913, s. 120.

սկիզբն ու վերջը[2], դրանց աղբյուրների նշումով[3]:

ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ[4]

«Ոչ արբից ի բերոյ որթոյ մինչեւ նոր արբից ընդ ձեզ ի նոր արքայութեանն, զի զմիւս չար հերձուածն ասէ ի բաց հանցէ, որ Քրիստոսի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն, զի բերոյ որթոյ (ասաց) ոչ արբից եւ ոչ ջուր բղխէ եւ արդ յորժամ Տէրն ի վերնատունն արբոյց աշակերտացն եւ ինքն ընդ նոսա՝ գինի անապակ էր եւ ոչ քացախ զի զքացախն ի խաչին արբ ի տիրասպան ժողովրդենէն հրեից...» (ՄԱՄ, ձեռ. № 6453, 45ա):

Հատվածը խմբագրումն է՝ Սահակ (Պարթև) կաթողիկոս, «Ընդդէմ երկաբնակացն նեստորականացըն» (այսուհետև՝ «Ընդդէմ»), տես «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 479, տ. 9—11 հմմտ. «Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 173:

«Զարմանամ ընդ ոմանս, որ ասեն թէ մինչ ապականացու չէր մարմինն Քրիստոսի զիարդ զնշան բևեռացն և զխոցումն եցոյց Թոմայի, այլ զի յամաւթ արասցէ զհերետիկոսս, որք ասեն, թէ խոցուածն յառաջ քան զհարութիւնն ապականութիւն էր. Եցոյց զնշան բևեռացն և յամաւթ արար զնոսայ, զի և յառաջ քան զյարութիւն անապական էր» (էջ 48բ):

Նույնությամբ բերված է՝ Ստեփանոս Սյունեցի, «Վասն անապականութեան մարմնոյն» (այսուհետև՝ «Վասն»), տե՛ս «Արարատ», 1902, էջ 377, տ. 102—106:

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻ

«Կոյս մայր եւ Յովսեփ հայր եւ ապականութիւն ոչ ուրեք եղեւ մարմին գոլով Բանն ոչ ըստ հնոց* ծննդեան ծնունդն, որով ապականութիւն քաղաքավարիւր... որ ետես զիս՝ ետես զՀայր**» (Հովհ. ԺԴ 9), (էջ 45բ—46ա):

Ամբողջովին ծագում է՝ «Կնիք հաւատոյ», էջ 247, տ. 4—9, միայն սկսվածքը տես նաև՝ «Վասն», էջ 390, տ. 433—436:

ԿԻՒՐԵՂ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻ

«Աստուածն Բան ըստորակեաց*** զինքն յոր ոչն էր, զի և որ ոչն էր մարդոյն, եղիցի բնութիւն նորա աստուածայնոյն**** գերունակութեան արժանաւորութեամբ ....զիւրն ի բաց եդեալ տկարութիւն զնորայսն ներգործէ զօրութեան հրաշս առ որ միացաւն» (էջ 48բ):

Հատվածը խմբագրումն է՝ «Վասն», էջ 378, տ. 113—120:

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

«Սպասաւորեաց կոյսն ի ձեռն անապականութեան Քրիստոսի, պահեաց զկուսութիւնն, զի անապականութեան ցանկացեալ եւ մայր անապականութեան... կոյս սպասաւորեաց բնութեամբ աստուածութեանն, վասն այնորիկ և բնութիւն անապական ետ նմա» (էջ 46բ—47ա):

Հատվածի սկսվածքը՝ «Կնիք հաւատոյ», էջ 245, տ. 3—7, նաև՝ «Կիւրղի եպիսկոպոսապետին Աղէքսանդրու պատասխանի թղթոյն առ Յոհաննէս եպիսկոպոս Անտիոքայ» տե՛ս Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 518, իսկ վերջը՝ «Վասն», էջ 386, տ. 333—335:

«Ոչ թէ վասն որովայնի լրման հրաւիրեցաւ յագիլ, այլ վասն ապաշխարութեան կնոջն մեղաւորի... իսկ իմաստնոց արբուցող ամենեցուն զբաժակն կենաց օրհնեալ տեսչութիւն քո Տէր» (էջ 50ա):

Ամբողջովին բերված է՝ «Կնիք հաւատոյ», էջ 257—258:

ԱԹԱՆԱՍ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻ

«Գահաւորակ արար արքա Սողոմոն, այսինքն մարմինն, զոր զգեցաւ Բանն ի մայրիցն անփուտ, այսինքն ի կուսէն անապական... զի վասն մեր իսկ առ մարմին անապական, վասն որոյ և Պաւղոս ասէ. Պարտ էր ապականացուիս այսմիկ զգենուլ...» (էջ 47ա—48ա):

Բերված է՝ «Կնիք հաւատոյ», էջ 247, տ. 15—20 հմմտ. «Վասն», էջ 387, տ. 351—355 և էջ 388, տ. 384—86:

«զԱդամայ յանցանսն յանյաւասարելի կանգնումն Քրիստոս կանգնեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց ...զի ինքն էր անմեղութեան հանդես, զի զանկեալն յերկնէ յերկիր դարձեալ յերկինս եհան» (էջ 49բ):

Բերված է՝ «Կնիք հաւատոյ», էջ 252—253, տող 13—25—2: «Բնութեամբ և ոչ պիտակապէս Տէրն

---

[2] Կարճ քաղվածքները բերվում են լրիվ:

[3] Տողատակի որոշ կարևորություն ներկայացնող տարընթերցումներ բերված են ըստ Մատենադարանի № 5618 ձեռագրի, որ գործս պարունակող ընդօրինակությունների մեջ վաղագույնը լինելով (ԺԳ դ.)՝ դժբախտաբար միայն հատվածաբար է պահպանել այն (էջ 1ա—195ա): Ըստ երևույթին երկի Բ խմբագրությանը պատկանող այս ընդօրինակության շատ հատվածներ եղծված են:

[4] Հայրախոսական քաղվածքների հերթագայությունը թողել ենք նույնը, այն է՝ ըստ ձեռագրի, միայն այն տարբերությամբ, որ միևնույն հեղինակին պատկանող (տարբեր տեղերում զետեղված) հատվածները ի մի ենք բերել նույն այդ հեղինակի անվան տակ:

* հնոյ

** զհայր իմ

*** ստորակեաց

**** աստուածային

մարդ եղեւ և ոչ ըստ բնութեան և ոչ ըստ գործոց մեզ մեղաց հանդուրժել կարողութիւն էր Արարչին... աճման հասակի, ամաց թուոց, աշխատութեան, ծարաւոյ, քաղցոյ և քնոյ տրտմութեան, մահու և յարութեան» (էջ 50բ):

Ամբողջապես բերված է՝ «Կնիք հաւատոյ», էջ 259, տ. 4—18:

ԳՐԻԳՈՐ ՆԻՍԱՑԻ

«Ընդրեալ ի բիւրոց վասն անապական և անախտ ծննդեանն արտաքոյ տրտմութեան յատկութեան... միշտ անփոփոխելի, միշտ անապական» (էջ 48ա—բ):

Համեմատել «Վասն», էջ 390, տ. 449—455:

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

«Զորօրինակ մարմինն Քրիստոսի ոչ ետես զապականութիւն, նոյնպէս և ոչ միտքն իմացան զմեղքս» (այսքան՝ էջ 48բ):

Բերված է՝ «Կնիք հաւատոյ», էջ 86, տ. 24—25: Բարսեղ Կեսարացու անվամբ հայտնի այս հատվածը նրա՝ Ապողինարի դեմ ուղղված գրության մի բեկորն է միայն: Վարդան Այգեկցու կազմած «Գիրք հաստատութեան և Արմատ հաւատոյ» դավանաբանական ժողովածուի մեջ ներկա հատվածը գրտնվում է «Ի հակառակելն Ապողինարի» ենթախորագրով սկսվող կարճառոտ քաղվածքների շարքում ևս. Տե՛ս ՄԱՄ, ձեռ. № 3295, էջ 357բ, հմմտ, ձեռ. № 1500, էջ 912ա:

ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑԻ

«Ամենայն ինչ կարելի է Աստուծոյ և զապականելին փոխել յանապականութիւն և որ ի վերայ երկրի է՝ կատարեալ յանապականութիւն... քանզի ով յանդիմանէ զԱստուած» (էջ 48բ):

Միայն սկսվածքը՝ «Վասն», էջ 377, տ. 85—88: «Վասն հարցանելոյն Տեառն, թէ ուր է Ղազար, եւ ո՞յ մերձեցաւ յիս, եւ թէ զոյ խնդրէք, այս որպէս ի հնումն խոնարհեալ Հօր առ ի հաւանումն մարդկան... այլ զի ցուցցէ առ մեզ զբազում խնամակալութիւնն իւր» (էջ 51բ):

Խմբագրումն է համապատասխան հատվածի՝ «Կնիք հաւատոյ», էջ 265, տ. 3—15, նաև՝ էջ 266, տ. 1—10:

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ

«Եթէ ոք յետ մկրտութեանն կամ յետ ի մեռելոց յարութեան որդեգրութեանն արժանաւորեալ ասիցէ, որպէս հեթանոսք թերի գրով ի ներքս աւծէն, նզովեալ լիցին, զի սկսեալն կամ յառաջադեմ լեալն, կամ կատարեալն ոչ է Աստուած» (այսքան, էջ 48բ):

Բերված է՝ «Ընդդէմ», էջ 475, տ. 26—29:

«Արիւն Աստուծոյ վիրաց լսելով եւ մահ մի ի վայր կործանիր իբրեւ Աստուծոյ ջատագով» (այսքան՝ էջ 10ա):

Բերված է «Կնիք հաւատոյ», էջ 352, տ. 10—14: «Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ» (այսքան՝ էջ 8բ):

Բերված է «Կնիք հաւատոյ», էջ 353, տ. 10—11 հմմտ. «Ընդդէմ» էջ 299,, նաև՝ Մատթէոս Ուռհայեցի, էջ 172: «...դուզնաքեայ շիթք արեան իբր խախաց լինի, եւ զաշխարհ ամենայն վերստին ստեղծանէ» (այսքան՝ էջ 10ա):

Բերված է «Կնիք հաւատոյ», էջ 353, տ. 19—21: «...ով նոր խառնմունս և սքանչելի խառնուածոյս» (այսքան՝ էջ 52բ) (Հատվածը գտնվում է «Յոհեայ Հռովմա հայրապետի»-ից բերված վկայության մեջ):

Բերված է «Ընդդէմ», էջ 470, տ. 11:

ՊՐՕԿՂ

«Այլ մեզ քաւ լիցի յայն բնութիւն Միածնին ապականութին խոստովանել, զմեզ քաւ լիցի վասն չարչարանացն և մահուն, զոր կրեացն իւրովք կամօք, ապականութիւն ասել» (այսքան՝ էջ 49ա):

Բերված է՝ «Վասն», էջ 393, տ. 519—523:

ՅՈՎՀԱՆ ՃԳՆԱՒՈՐ (ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻ)

«Ադամ աստուածաստեղծ ամենևին անապական էր, ի ստունգանելն ապականացու եղև, իսկ նորոգումն Աստուած զիւր Որդին առաքեաց... արար զապականութեան քակտումն և առաւել ի գերեզմանէ յարութեամբն» (էջ 49ա—բ):

Բերված է՝ «Վասն», էջ 396—397, տ. 2—20:

ԴԻՈՆԷՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ

«Ոչ մարդ***** էր ոչ որպէս ոչ մարդ էր, այլ որպէս ի մարդկանէ մարդկան գերազանց և ի վեր քան զմարդ... այլ այրացելոյ Աստուծոյ նոր իմն Աստուած այրացան ներգործութեամբ ընդ մեզ քաղաքավարեալ» (էջ 49բ—50ա):

Բերված է՝ «Կնիք հաւատոյ», էջ 256—257, նաև՝ էջ 101, տ. 1—7:

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

«Զի որպէս յառաջ քան զչարչարիլն պարգևաց զմարմին իւր աշակերտացն՝ յայտ առնելով, թէ ինքնակամ չարչարի... ոչ քաղցիցէ և ոչ գոյ քնութիւն իմաստութեան նորա» (էջ 50ա—բ):

Բերված է՝ «Կնիք հաւատոյ», էջ 258, տ. 9—28 հմմտ. «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տըփղիս, 1909, էջ 244, տ. 5—19:

***** մարթ

ՓԻԼԻՔՍԻՄԱ ԲԱՔԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

«Առ Տէրն մեր մարմին ճշմարիտ և ցանկութիւն ոչ ի նմա և ոչ հալումն և ոչ մի ինչ-որ ի պատնառս դատապարտութեանն ... այլ ոչ ի բռնութենէ քաղցի որպէս կարօտ ձգեալ ի պետսն» (Էջ 50բ—51ա):

Փիլոքսենոս (Քսենայաս) Մաբուգի կամ Հիերապոլսի եպիսկոպոսի անվամբ բերված այս հատվածը խմբագրումն է՝ «Վասն», էջ 379, տ. 158—162:

ԵՐԻԱՆՈՍ (ԻՐԵՆԵՈՍ ԼՈՒԳԴՈՆԱՑԻ)

«Նոյն ինքն Բանն Աստուծոյ հոգւով****** գիտութեամբ, կատարելութեամբ երեւեալ և ոչ հոգւով անգիտութեամբ եւ պակասութեամբ... եւ եթէ գիտութիւն, ոչ անգիտութիւն, եւ եթէ կատարելութիւն, ոչ երբէք թերութիւն» (Էջ 51ա):

Բերված է «Կնիք հաւատոյ», էջ 262—263, տ. 15—17, տ. 1—9:

ԿԻՐԻՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ

«Վասն այնորիկ Յիսուս առ յանձն զդատապարտութիւն, զի լուծցէ զվճիռ դատապարտութեան զառաջնոյ դատաստանին... այլ զի զասաստ նզովիցն տերեւով չափ կամէր առնել և ոչ պտղով» (Էջ 51ա—բ):

Հատվածը բերված է «Կնիք հաւատոյ»-ից (Էջ 264, տ. 10—31) ամբողջապես և, ըստ երևույթին, սկզբնապես մաս է կազմել Խաչի տարփողմանը նվիրված «Պարծանք Սրբութեան Կաթողիկէ եկեղեցւոյ» սկսվածք ունեցող մի ճառի կամ ճառաշարքի, որովհետև «Կնիք հաւատոյ»-ում բերված հատվածիս վերտառությունն է «Երանելւոյն Կիրղի Երուսաղեմացւոյ եպիսկոպոսի, որ «Ի Տէր ո՞ հաւատաց, ի բանէն՝ Պարծանք սրբութեան, (հմմտ. «Կնիք հաւատոյ», Ներածութիւն, էջ XLIV): Հատվածը բացակայում է հեղինակի քաջ հայտնի «Կոչումն ընծայութեան» աշխատությունից (Վիեննա, 1832 հմմտ. Կյուրեղի երկասիրության նույն սկզբսվածքն ունեցող ԺԳ գլխի հետ՝ էջ 234):

ՅՈՒԼԻԱՑ ՀՌՈՄԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

«Զարմանամ լսելով յաղագս ոմանց խոստովանողաց, ահա ածեն մարմին զՏէր, իսկ զառ ածելոց ի հերձուած չարապէս... զիա՞րդ էր հնար զայլոյն շարաբառնալ զտկարութիւն, որ ի իւրոցն վտանգիւր կրիցն» (Էջ 51բ—53ա):

Բերված է՝ «Կնիք հաւատոյ», էջ 259—262, նույնը՝ այլ թարգմանությամբ՝ էջ 186—187 հմմտ. «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի», աշխատ. Կարապետ ծ. վ. և Երուանդ վ., Էջմիածին, 1908, էջ 259—262, նույնի ընդարձակ խմբագրությունը՝ էջ 186—187:

Յուլիոս Հռոմայեցու այս հատվածը Սանահնեցու «Հակաճառության» համապատասխան վկայության նկատմամբ մեծ փոփոխություններ է հայտաբերում՝ բառային, բառադարձվածային նկատելի տարբերություններով և ընդհշմարելի ետևառաջություններով հանդերձ: Ըստ երևույթին «Կնիք հաւատոյ»-ի և Տիմոթեոս Կուզի նշված հատվածների խմբագրումն է:

Աղբյուրների քննությունն ու արժևորումն այսպիսով թույլ է տալիս Անանիա Սանահնեցու այս աշխատասիրությունը մեկը համարել հայ դավանաբանական—գաղափարական պայքարի պատմության ուսումնասիրմանն ի նպաստ կարևորագույն սկզբնաղբյուրներից:

****** հոգով